Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
նոյեմբերի 30 -ի N 718 - Ա
որոշման

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔԻ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ծ Ր Ա Գ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերականգնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գեղարդավանքի Սուրբ Կաթողիկե եկեղեցին: Կառույցը վերջին անգամ մասնակի վերանորոգվել է անցյալ դարի յոթանասունականներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Կոտայքի մարզ, գյուղ Գողթ, Սբ. Գեղարդավանք, հոգևոր բնագավառ՝ եկեղեցաշինական:
6.	Ծրագրի բյուջեն	146.483.700 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, ուխտավորներ և հավատացյալներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր 2022 թ.

9.	Միջոցառումների նկարագրությունը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Նախապատրաստական աշխատանքներ կետը նախատեսում է ընդհանուր շին. աշխատանքների օժանդակող տախտակամածի մոնտաժում և ապամոնտաժում՝ 7.865.230 դրամ, 15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր 2022 թ.: 2. Եկեղեցու տանիքածածկեր կետը նախատեսում է կառույցի՝ • Վեղարի (եկեղեցու գմբեթարդ քարե ծածկույթ) հին քարերի, թմբուկի քիվերի, լիցքերի քանդում, հեռացում և ապա՝ բարդ պրոֆիլավոր քիվերի, ծածկասալարերի եւ վեղարի վերաշարում նոր բազալտե տաշվածքով՝ 48.253.060 դրամ, 15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր, 2022 թ.: • Շանթարգելում կետը նախատեսում է եկեղեցու մետաղական խաչի կայծակից անվտանգ պահելու միջոցառումներ՝ 589.660 դրամ, 15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր 2022 թ.: • Լանջավոր տանիքածածկեր կետը նախատեսում է եկեղեցու չորս կողմերի երկլանջ բազալտե տանիքածածկույթի քանդում հեռացում և նորի վերաշարում՝ 59.319.410 դրամ, 15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր 2022 թ.: Ընդհանուր-116,026. 360 դրամ 3. Եկեղեցու ճակատներ կետը նախատեսում է կառույցի 4 ճակատների բազալտե քայքայված քարերի փոխարինում եւ վերականգնում՝ 19,226. 890 դրամ, 15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր 2022 թ.: 4. Ընդհանուր աշխատանքներ կետը նախատեսում է բոլոր պատերի դատարկ միջուկների կրաշաղախով սրսկում, շին աղբի հեռացում՝ 11.229.450 դրամ, 15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր 2022 թ.: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 146.483.700 դրամ: Ծրագրի իրականացման ժամկետը 15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր 2022 թ.

10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գեղարդավանքի Սուրբ Կաթողիկե եկեղեցու վերականգնումը նախատեսվում է իրականացնել կապալառու «ԼԵԻԳՈՒԿ» ՓԲԸ-ի միջոցով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 146.483.700 դրամ: Ծրագրի իրականացման ժամկետը 15 դեկտեմբեր, 2020 թ. - 30 հոկտեմբեր, 2022 թ.:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ